

**ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՐՎՈՂ
ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՇՈՒՐՋ**

Բաճաթիւ. գիտ. քեկեածու Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայերենում իրանական ծագում ունեցող բառերը զգալի թիվ են կազմում: Այդ բառերը մեր լեզուն փոխառել է պատմական տարբեր ժամանակահատվածներում: Եթե ուշ շրջանից՝ նոր պարսկերենից հայերենին անցած բառերը գործառում են հիմնականում բարբառներում, ժողովրդախոսակցական լեզվում և չեն մտնում զրական նորմայի մեջ, ապա վաղ՝ արեւմտյան, պահլավական, սասանյան շրջանից կատարված բառային փոխառությունների զգալի մասը վաղուց արդեն գիտակցվում է որպես հայերեն և մտնում է հայոց լեզվի բառապաշարի հիմնական ֆոնդի մեջ (հմմտ. աշխարհ, գունդ, հազար, նամակ, նվեր, պահակ, պահել և այլն): Ավելին՝ իրանական շատ ձևեր վերականգնվում են հայերեն բառերի միջոցով:

Մեծանուն հայագետներ Հյուբշմանի, Մեյեի, Աճառյանի կողմից մանրակրկիտ ուսումնասիրված են հայ-իրանական լեզվական առնչությունները, ստուգաբանված են հազարից ավելի բառեր: Մեր օրերում դարձյալ շարունակվում են ադաշտաբանները: Ի հայտ են բերվում նոր փաստեր, լրացումներ, կատարվում են նոր ստուգաբանություններ: Անշուշտ, շատ բառերի ծագումը ստուգապես ապացուցված է, բայց կան բառեր, որոնց իրանական ծագումը հաստատող կամ փոխառություն դիտելու փաստարկները բավարարչեն կամ խիստ առարկելի են:

Ստորև կանդրադառնանք նման կարգի մի քանի բառերի քննությանը:

ԱՐԱՄԱԶԴ

Արամատական բառարանը մեկնում է՝ «մի տեսակ թռչուն, Արամազդ աստուծոյ անունից, որ պարսիկ փոխառություն է»: Այն Հյուբշմանի իրանական փոխառությունների բառացանկում չկա: Բառը հաճախական կիրառություն չունի և վկայված է միայն Վարդան Այգեկցու առակներից մեկում. «Ժողովեցան արամազդ թռչունքն և լուացեցան յեզեր ծովուն զի դիցեն զզեղեցիկն իւրեանց թագաւոր, և ճայեկն սևագոյն է. քաղեաց զպայծառ փետուրն, որ թափեցաւ ի լուանալն... և պայծառ երեւցաւ... և զան տեսեալ արամազդքն աւծին զնայ թագաւոր»¹:

Մեր կարծիքով արամազդ-ը հենց այս բնագրում էլ թռչունի անունն չէ, այլ հիշատակվում է Արամազդ աստվածը: Արամազդ ձևը թերևս սխալագրություն է և պետք է լիներ առ Արամազդ՝ «Ժողովեցան առ Արամազդ թռչունքն...»: Այսպես լինելու դեպքում երկրորդ՝ արամազդին ձևը, պարզ է, չէր կարող լինել: Ուշագրության արժանի է այն հանգամանքը, որ առակի մեկ այլ

¹ Ն. Մ ա ո, Ժողովածոյք Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 35—36:

տարբերակում կարողում ենք. «Արամաստ շաստուածն ասաց թէ հաւքտ ամենայն էկեալ...»², որը հաստատում է մեր ենթադրությունը:

Հնդհանրապես առականերում թուշունների թագավոր ընտրելու, ամենագեղեցիկ թուշունին որոշելու թեման շատ հին է և գոյություն ունի մի շարք ժողովուրդների մոտ: Առականերում այդ ընտրությունը անում է Զևս—Յուպիտեր—Արամազդ աստվածը: Այդպես է, օրինակ, V դարից վկայված Նոնոսի մեկնություն մեջ. «Ընտրութիւն էր ասէ, յաղագս գեղեցկութեան հաւուց և Զևս էր քննիչ ընտրութեան»³: Ուրեմն, Այգեկցու առականերում հանդիպող առամազդն էլ ոչ թե թուշունի անուն է (առակում ուղղագրական աղավաղումները ակնհայտ են) այլ Զևս—Արամազդն է: Արամազդ թուշանունը վկայված չէ ո՛չ իրանական լեզուներում և ո՛չ էլ հայ մատենագրության մեջ: Ուրեմն բառն այդ իմաստով որպես պարսկերենից փոխառյալ միավոր համարելը ճիշտ չէ:

ԱՒԱՆ

Բառին վերագրվում է իրանական ծագում (Հյուբշման, Աճառյան, Բենվենիստ): Հին պարսկերենում իրոք վկայված է āvahana «գյուղ, ավան» բառը:

Հայերեն աւան-ը փոխառյալ է համարվում ոչ անմիջապես հայրս. նշված ձևից, այլ պահլավերեն *avahan-ից, որն իրանական լեզուներում վկայված չէ: Ենթադրյալ այս ձևից էլ ենթադրվում է հայերեն *աւահան—աւան-ը: Իհարկե, լեզվաբանության մեջ վերականգնված (չավանդված) ձևերից ստուգաբանական դիտողություններ ու ճշգրիտ ստուգաբանություններ շատ են արվում: Մեր օրինակի դեպքում, սակայն, āvahana-^{*}avahan-^{*}աւահան—աւան անցումը այնքան էլ համոզիչ չէ: Հնչյունաբանորեն այդ անցումը հնարավոր է, բայց իրանական հ-ն նաև հայերեն բառերում պահվելու միտում ունի (*vistāhuvā-վստահ, *perāhan-պարեհնակ և այլն):

Լեզվաբանական դրականության մեջ հյ. աւան-ը կապվում է նաև ուրարտերեն ebanī-ի հետ⁴: Այստեղ հնչյունական համապատասխանությունը ակնհայտ է: Ուրարտերեն b հայերենում տալիս է Վ, իսկ e կարող է տալ ն կամ ա⁵: Գ. Ղափանցյանը կապ է տեսնում նաև մի կողմից հյ. աւան, մեզրել. abanī «տեղ» և քարթվելական ubanī «թաղամաս» բառերի միջև (հմմտ. նաև վրաց. gardabani քաղաքանունը), մյուս կողմից՝ խեթ. umene «քաղաք» բառերի միջև: Իսկ ասորական-իրանական ձևերը նա փոխառություն է համարում հին ասիական լեզուներից⁶: Այստեղ էականը հին ասիանիկ լեզուների ղափանցյանական տեսության հարցը չէ, այլ այն, որ որոշակիորեն կասկածի տակ է առնվում աւան բառի իրանական ծագումը: Եվ իրոք այն կասկածելի է. այլ կերպ ասած, բառի իրանական ծագումը հաստատող եղած փաստարկները համոզիչ չեն:

² Նույն տեղում, էջ 36:

³ H. Manandian, (Nonos) die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, Marburg, 1903, S. 48.

⁴ Տե՛ս Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 133—134:

⁵ Տե՛ս Ի. М. Дьяконов, Материалы к фонетике урартского языка («Вопросы грамматики и истории восточных языков», М.—Л., 1958, стр. 48).

⁶ Գ. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 133—134:

Բառերի ստուգաբանության ժամանակ, անշուշտ, էական են հնչյունաբանական-հնչյունափոխական օրինաչափությունները, բայց պակաս կարևոր չեն նաև արտալեզվական գործոնները, բառի գործառական առանձնահատկությունները, վկայության յուրահատկությունները:

Աքեմենյան արձանագրություններում āvahana-ն կիրառված է լոկ երկու անգամ (այլ աղբյուրներում բառը վկայված չէ): Ուշագրության արժանի է այն հանգամանքը, որ երկու անգամ էլ բառը վերաբերում է ոչ իրանական բնակավայրերին: Մեկ դեպքում այն Ujāy ավանն է՝ avahanam—Ujāy, որը գտնվում է էլամի տարածքում⁷: Երկրորդ վկայությունը վերաբերում է Զուզա ավանին: Վերջինս գտնվում է Հայաստանում՝ նախկին Ուրարտուի տարածքում: ...ta: patiš: Dādaršim: hamarānam: cartanaiy: Zūzahya: nama: āvahanam⁸:

Այն, որ āvahana-ն գործածվել է միայն օտար տեղանունների համար, հիմք է տալիս ենթադրելու, որ բառն էլ պարսիկների կողմից գիտակցվել է որպես օտար բառ: Այսօր էլ օտար անվանումները օտար բառերով արտահայտելը ընդունված երևույթ է (հմտ. ոռոսական խոսողներ կամ այսինչ խոսողը, հունական պոլիսներ, լեռնային առուներ և այլն):

Հստ երևույթին՝ արձանագրող փորագրիչին ծանոթ է եղել այդ բառը, որը էլամերեն չէ: Մնում է ենթադրել, որ արձանագրողը օգտագործել է համապատասխան ուրարտերեն բառը՝ ebanu բառին տալով հպրս. հնչյունական համապատասխան դրսևորում: Գիտական գրականության մեջ վաղուց է նկատված ուրարտական մշակույթի, այդ թվում և արձանագրությունների ազդեցությունը աքեմենյան մշակույթի վրա:

Հարկ է նշել նաև, որ հպրս. սեպագրերը պետական գրագրության մեջ չեն կիրառվել: Սեպագրերը հասկանալի են եղել միայն սակավաթիվ մարդկանց⁹: Այս պայմաններում նման լեզվական «մեղանշումների» հնարավորությունը ավելի է մեծանում:

Հայերենում առանձին հին ակունքների (եթե ոչ բնիկ լինելու) մասին է վկայում այն փաստը ևս, որ հայերենում բառը գործառում է մեծ հաճախականությամբ, հանդես է գալիս և՛ անկախաբար, և՛ որպես բաղադրիչ, այլև դերբայական ու բայական ձևերով: Օրինակներ. Երեւեալ դիւացն... յճրէզն աւանի¹⁰: Ուրարտութեամբ յաւանն դառնային: Հասանէր ի քաղաքագեւղն Բագաւան¹¹: Որք յետոյ աւանացեալ անուանեցան Որթք¹²: Իսկ տեղին աւանանայր, քաղաքանայր¹³:

⁷ R. Kent, Old Persian Grammar, Text, Lexicon, New Haven, 1953, p. 143.

⁸ Նույն տեղում, էջ 121 (ահա հատվածի հայերեն թարգմանությունը. «...Արմինիայի մեջ Զուզա անունով մի ավան կա». տե՛ս «Դարեհ Վշտասպի բիսեթունյան արձանագրությունը», թարգմ. բաղադրիչ, առաջաբանը և ծանոթագրությունները Գ. Նալբանդյանի, Երևան, 1964, էջ 14):

⁹ М. А. Дандамаев, В. Г. Луконин, Культура и экономика древнего Ирана, М., 1980, стр. 270.

¹⁰ Ա գ ա Բ ա ն Է Ե ղ ո ս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 409:

¹¹ Նույն տեղում, էջ 426, 427:

¹² «Մովսիսի խորենացույ Պատմութիւն Հայոց», Տիֆլիս, 1913, էջ 289:

¹³ «Փաւստոսի Բուղանդացույ Պատմութիւն Հայոց», Պետերբուրգ, 1883, էջ 91:

ԳՈՍԱԿ

Հայ մատենագրության մեջ վկայված է մեկ անգամ. «Մորուքն ոչ կարի երկայն և ոչ գոմակ, այլ շափաւոր»։ Արմատականում բառը կապվում է պրս. kōsa -ի հետ։ Աճառյանը ենթադրում է, որ «հայերենի մեջ գրիչը թերևս կարծելով հյ. գոս բառից՝ գրել է գոսակ, մինչդեռ ճիշտ ձևն է քոսակ»¹⁴։

Անկախ այն բանից, թե գրիչը շփոթել է քոսա-ն գոսակ-ի հետ թե չէ, բառը իրանական փոխառություն չպետք է դիտել։ Բառը վկայված է XIV դարից, երբ հավանորեն հայ շատ բարբառներում, խոսակցական լեզվում հավանորեն գործառում էր պրս. kōsa-ն։ Գրիչը չէր կարող k (թ)-ն դարձնել գ և ավելացնել ակ մասնիկը։ Մյուս կողմից, եթե բառը իրանական ծագում ուներ, ապա -ակ- ձևույթի առկայությունը կհուշեր նրա սլավոնական բնույթը։ Սակայն հայերենում պհլ. ենթադրյալ ձևի վկայությունը միայն XIV դարից անհավանական է, մանավանդ որ կա պրս. kōsa ձևը։ Մնում է ենթադրել, որ գրիչը կազմել է նոր հայերեն բառ՝ գոս+ակ կազմությամբ, որի երկու բաղադրիչներն էլ հայերեն են։ Այլ բան է, որ այդ նորակազմությունը հետագայում տարածում չգտավ։

ԻՇԽԵԼ, ԻՇԽԱՆ

Արդեն V դարից շատ գործածական բառեր էին։ Միայն Աստվածաշնչում կիրառված են ավելի քան 700 անգամ։ Արմատական բառարանում իշխել-ը դիտվում է իրանական փոխառություն՝ xš- «իշխել» ձևից։ Զնդ. xš- «իշխել, տիրել», հպրս. xšayaθiya «թագավոր, xšatra «պետություն» և այլն։ Իրանական այդ բառերի հետ թուուցիկ ձևով համեմատվում է նաև խեթ. išha- «տէր» բառը։

Այն, որ xš հնչյունակապակցությունը բնորոշ է իրանական ծագմամբ բառերին, անհերքելի է։ Անհերքելի է նաև, որ հայերենում այն դառնում է շխ։ Որպես կանոն հայերենը ստանում է նաև նախահար ձայնավոր (ոչ միայն այդ կապակցության դեպքում). հմմտ. (ա)րազ- (ե)րամ, (ա)շխարհ և այլն։ Հայերենում նախահար ձայնավորը հատկապես իրանական ծագմամբ բառերի դեպքում ա-ն է կամ ե-ն։ Իշխել բառի դեպքում ունենք ի։ Ըստ արմատական բառարանի բացատրության, սկզբից նախահարը եղել է ե-ն, «որը հաջորդ շ-ի պատճառով դարձել է է, ինչպես ունենք էշ>*եշ>ek'vo: Իշխել-ի հայերեն նախաձևը դիտվում է *էշխել-ը, որը հետո դարձել է իշխել։ Նախ, նկատենք էշ>*եշ>ek'vo-ի դեպքում (եթե իրոք այդ հնչյունափոխությունը կար) գործ ունենք բնիկ հայերեն բառի հետ, փոխառյալ բառերի դեպքում (նկատի ունենք իրանական հին փոխառությունները) նախահարը ա-ն է, կամ ե-ն։ Ե> է դեպքեր չկան։ Ուրեմն պետք է ենթադրել, որ հյ. իշխել բառի մեջ իրան. xš- շխ-ի հնչյունախումբը չէ, այլ իշխ արմատը։

Հյ. իշխան և խեթ. išha-ի կապը նկատել են Ն. Մարտիրոսյանը, Հր. Աճառյանը, Գ. Ղափանցյանը։ Ինչպես նշել ենք, Հր. Աճառյանը բառը այնուհանդերձ իրանական է համարում։ Գ. Ղափանցյանն էլ հայերենի և խեթերենի

14. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971։

Համապատասխանությունը առերևույթ է համարում, պատճառաբանելով, որ խեթերեն արմատը կարելի է կարգալ *ešha* կամ *esha*: Ըստ Ղափանցյանի, եթե բառը նույնիսկ կարդացվեր *š-ով* և ոչ *թե s-ով*, ապա այս դեպքում էլ կապ պետք է տեսնել կապադովկիական, ավելի կոնկրետ՝ լուվիական *ash-u* «պետ, տեր» բառերի միջև, որ պահպանված է մի շարք հատուկ անուններում¹⁵:

Վերջապես Գ. Ղափանցյանը չի անտեսում նաև բառի իրանական ծագման հնարավորությունը¹⁶:

Իհարկե, եթե ճիշտ է հեղինակի առաջին ենթադրությունը, ապա հայերեն բառը իրոք իրանական փոխառություն չպետք է դիտել: Ինչ վերաբերում է հայերենի և խեթերենի կապին, ապա պետք է ասել, որ խեթերենի նորագույն ուսումնասիրություններում էլ ընդունվում է *išha-* «տեր» արմատի գոյությունը, հմմտ. *išha-ššara* «տիրուհի», որտեղ *ššara* անձանց իգական սեռի ցուցիչ է¹⁷: Ուրեմն կարելի է ընդհանրություն տեսնել հայ. իշխան, իշխել և խեթ. *išha-*ի միջև, որը լուրջ կասկածի տակ է առնում բառի իրանական ծագումը:

ՅԱՆՏԻԼ

Արմատական բառարանում համարվում է անստույգ բառ: Աճառյանը ենթադրում է «ախտանալ» նշանակությունը: Հայոց լեզվի պատմության մեջ բառը արդեն դրված է իրանական փոխառությունների ցանկում՝ «ախտանալ» նշանակությամբ, որը կապվում է *պհլ. axt քնդ. āxti-ի հետ*¹⁸: ՆՀԲ-ն բառին վերագրում է «յաղթիլ կամ յոխորտիլ», իսկ առձեռն բառարանը՝ «հիվանդանալ» իմաստը:

Բառը վկայված է մեկ անգամ և բերված է արմատական բառարանում. «Որք ի զազանս և յանասունս յանդգնին, նման են այնոցիկ, որ ընդ դևս յախտին»: Օրինակից, անշուշտ, հնարավոր չէ ստուգապես պարզել յախտիլ-ի բառիմաստը, իսկ սա կարևոր հանգամանք է բառի ծագումը որոշելու համար: Եթե ճիշտ է ՆՀԲ-ն, ապա այն պետք է կապել յաղթ արմատի հետ, որը իրանական չէ, իսկ եթե բառը ունի «ախտանալ, հիվանդանալ» նշանակությունը, ուրեմն կապվում է ախտ արմատի հետ, որն իրոք իրանական ծագում ունի. *պհլ. āxt* «հիվանդություն», բայց այս դեպքում ճիշտ չէ յախտիլ-ը, որպես ախտ արմատի բայական ձև (ընդ որում աղավաղված, ոչ կանոնիկ ձև), հաշվել որպես նոր փոխառյալ միավոր: Նշենք նաև, որ ախտ արմատից յախտիլ ձևի դեպքում յ-ի առկայությունը հուշում է, որ բառը հայակաղմություն է:

ՏԱՇՏԱԿ

Արմատական բառարանում դիտվում է առանձին. փոխառյալ բառ (տաշտ-ից անկախ), որը ծագում է *պհլ. *taštak-ից*: Ահա այդ բառով վկայ-

¹⁵ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961, էջ 204, 205:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ *Տե՛ս* В. В. Иванов, Хеттский язык, М., 1963, էջ 14:

¹⁸ Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 273:

ված օրինակը. «Բաժակ էր և արեան անասնոցն զոր ետ զենլոյն առնուին ի տաշտակս և ի բաժակս» (ՆՀԲ): Հայերեն տաշտակ բառաձևի կապը պհլ. համապատասխան ձևի հետ կասկածելի է:

Պահլավերենում այդպիսի բառ ավանդված չէ և նրա գոյությունը ենթադրվում է պրս. *tašta*-ից: Պահլավերենում *ak*-ով վերջացող շատ բառեր պարսկերենում իրոք ունեն *a* (*namak-nama...* և այլն): Բայց հնարավոր է պրս. *a*-ով ձևերը պահլավերենի ժառանգություն չլինեն, այլ նոր պարսկերենի լեզվական իրողություն: Պետք է ասել, որ պարսկերենում էլ *tašta* ձևը հաճախական չէ և ավելի շատ կիրառվում է *tast* ձևը¹⁹, որի կապը արդեն պհլ. *tastak*-ի հետ համոզիչ չէ:

Մեր մի շարք բարբառներում գործառող թէշտ «տաշտ» բառն էլ հենց պրս. *tašt*-ից է և ոչ թե *tasta*-ից կամ գրաբարյան տաշտ-ից: Ուրեմն կասկածելի է նախ պհլ. **tastak* պրս. *tašta* և ապա դրանից ելնելով նաև հյ. տաշտակ բառերի կապը: Հավանականը այն է, որ տաշտակ-ը հայակաղմություն է, պհլ. *tast* > հյ. տաշտ+ակ ձևույթը, վերջինս հայերենում փոքրացուցիչ մասնիկ է. հմմտ. նաւ+ակ և այլն: Արդեն V դարում «տաշտ»-ը հայերենի կողմից վերջնականապես յուրացված բառ էր, այն հեշտորեն ենթարկվում է հայերենի բառակազմական կաղապարներին:

* * *

Հայ մատենագրության մեջ հանդիպում ենք մի քանի բառերը, որոնք ստույգ իրանական են, բայց ձիշտ չէ իրանական փոխառություն դիտելը, որովհետև հենց հայերեն համատեքստում դրանք համարվում են պարսկերեն բառեր, պարսկերենի բառարանային միավորներ, որոնց իմաստները բացատրվում են հայերենով: Բերենք մի քանի օրինակներ. Աթաշ... արմատական բառարանում համարվում է իրանական փոխառություն՝ «Իբրև անուն Հրոյ Պարսից»: Բառը պահլավերենում ունի *ātaxš*, պարսկերենում *ātas* ձևը: Թվում է կասկած չկա հայերենում վկայված ձևն էլ իրանական փոխառություն դիտելու: Ասենք, որ բառը հաճախական չէ, այն կիրառել է Սեբեոսը: Բերենք վկայությունը. «Առաւ և Հրատն, զոր ընդ ինքեան շրջեցուցանէր թագաւորն հանապազորդ յազնականութիւն իւր, որ մեծագոյն համարեալ էր քան դամենայն կրակ, որ կռէր ի նոցունց (իմա՛ պարսիկների կողմից—Լ. Հ.) աթաշ»²⁰: Օրինակից էլ հստակորեն զգացվում է, որ հեղինակն էլ բառը համարում է պարսկերեն՝ բացատրելով աթաշ-ի իմաստը:

Իրանական փոխառություն է դիտվում նաև նեմոզը՝ «հարավ»: Բառը վկայված է VII դարի աշխարհացույցում: Աշխարհացույցի հեղինակը թվարկում է Պարսից աշխարհի կողմերը. «Պարսք, որ կռչեն Քուստի նեմոզը, յելից կալով խուժաստանի... ունի յինքեան աշխարհս փոքունս զայս...»²¹:

¹⁹ *Слов Персидско-русский словарь*, т. I, М., 1970; Б. Миллер, *Персидско-русский словарь*, М., 1960; Г. Ашурри, *Русско-персидский словарь*, Л., 1934; Բառարան Պարսկերեն—հայերեն կազմեց Գ. Կիրակոսյան, Զուղա—Սպահան, 1933:

²⁰ «Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն», Երևան, 1939, էջ 28:

²¹ *Տե՛ս «Մովսէսի խորենացույց մատենագրութիւնք»*, Վենետիկ, 1865, էջ 613:

Նկատենք, որ այստեղ նեմոռ-ը չպետք է առանձնացնել Քուստի նեմոռ բառակապակցությունից, որը բաղադրյալ հատուկ անուն է: Բաղադրիչները հայերենում անկախաբար չեն կիրառվում: Ավելի կոնկրետ հայերենում նեմոռ «հարավ» բառ չկա: Եվ, եթե այդ առանձնացումը մենք կատարում ենք, ապա դարձյալ գործ ունենք տեղանվան հետ, որը չպետք է թարգմանել և համապատասխան բառն էլ դիտել որպես փոխառություն: Որ իրոք գործ ունենք աշխարհագրական վայրերի հետ, ավելի հստակ է երևում աշխարհացույցի մի այլ հրատարակությունից, որտեղ ԻԹ գլխում գրված է. «Աշխարհն Պարսից ընդ չորս բաժանի... Քուստի նմոռ, Քուստի խորասան, Քուստի Կասկ-կոհ...»²²: Ինչպես խորասանը, Կասկոհը մենք իրանական փոխառություն չենք համարում, այնպես էլ նեմոռը (այլ տարբերակում նմոռ, նիմդոսը) նույնպես չպետք է փոխառություն հաշվել:

Տարազուկ. վկայված է Շիրակացու մոտ (VII դար): Այդ բառին հանդիպում ենք աստղային համաստեղությունների թվարկման մեջ: «Խոմբ աստեղատանցդ, որ անուանեալ կոչին կենդանատեսպք, եթե յորոց և զինչ իւրաքանչիւր պատճառք անուանցդ՝ գործ աւելի համարիմ պատմել... հարկաւորիմ զնոյն անուանս յիշել՝ զոր ետ Քաղղէացւոց կոչեն Յոյնք, Հայք, Պարսք: Յոյնք կոհոս, Հայք խոյ, Պարսք վարբակ, Յոյնք տաւրոս, Հայք ցուլ, Պարսք գաւ: (Հոյն) Զիւզոս, (Հայք) կշիռ, (Պարսք) տարազուկ²³: Բերված հատվածից երևում է, որ գործ ունենք համաստեղության հունարեն, հայերեն և պարսկերեն անվանումների հետ, և, կերպ ասած՝ տարազուկ-ը պարսկերեն բառ է և ոչ թե պարսկերենից կատարված փոխառություն: Նկատենք, որ արմատական բառարանում իրապացիորեն տեղ չեն զտել վարբակ, գաւ բառերը: Ուրեմն և տարազուկ-ը պետք է հանել հայերենի իրանական փոխառությունների ցանկից:

Նույն սկզբունքով իրանական փոխառություն չպետք է համարել զարգասառ բառը: Ըստգոյմոթ օգտագործված է որպես մականուն, այսինքն, գործ ունենք հատուկ անվան հետ, մյուս կողմից՝ դարձյալ տեղատու հենց բառը դիտվում է պարսկերեն և տրվում հայերեն թարգմանությունը. «Որ էառ կին Պարթևաց՝ Սահակդուխտ անուն ի Պարտաւայ, որ և ամուլ գոլով հաւատաց ի Քրիստոս և ետ նմա զաւադ՝ զՎախտանգ, որ և Գուրգասարն կոչեցաւ, որ է Գալազուխ ի պարսից բառն»²⁴:

О НЕКОТОРЫХ АРМЯНСКИХ СЛОВАХ, СЧИТАЮЩИХСЯ ИРАНскими ЗАИМСТВОВАНИЯМИ

Кандидат филол. наук Л. Ш. АВАНЕСЯН

(Резюме)

Арменоведение достигло больших успехов в области изучения армянских слов иранского происхождения. Большинство их этимологий довольно убедительно. Однако некоторые нуждаются в уточнениях.

²² «Աշխարհացույց Մովսեսի խորենացույ», Վենետիկ, 1881, էջ 40:

²³ «Անանիայի Շիրակունույ մնացորդ բանից», Ս. Պետերբուրգ, 1877, էջ 62:

²⁴ «Հաւատմն Պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 91:

Слово *տիւն* «деревня, поселок» может быть и урартского происхождения (*ēban* «деревня»). Связь армянского слова *իշխան* «князь» с иранским корнем *xš* менее убедительна, чем с хеттским *isha* «хозяин». Слово *տրտաշ* в словаре Ачаряна толкуется как название птицы, однако значение слова в контексте совсем иное: имеется в виду верховный бог Зевс-Арамазд. Слово *տաշտ* не является прямым заимствованием из пехлевийского **taštak*. Здесь *-աշ*—армянский уменьшительный формант (ср. *նաւ+աշ* и т. п.). *Գորգաշոր*, *նեմող*, *տաշաղ*—исконно иранские слова, но неправильно считать их иранскими заимствованиями. Они приведены в текстах как персидские слова и с армянским переводом.